Ֆորտունա Լոռու մարզային ՀԸ ‘’ԹՂԹԱՊԱՆԱԿ ” հաղորդաշար

Լոռու մարզպետ՝Արամ Խաչատրյանին

ԼՄ կրթության. մշակույթի եւ սպորտի վարչության պետ՝ Արամ Գրիգորյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Գրիգորյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասի» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել հետեյալ տեղեկությունները՝

1 Արդյո՞ք տեղյակ եք Վանաձորի Ազ.Խլղաթյանի անվան թիվ 18 դպրոցում տեղի ունեցած դասղեկների խորհրդակցության ժամանակ տեղի ունեցած միջադեպի մասին եւ եղել է արդյո՞ք հանդիպում ձեր կողմից՝անձնակազմի ,տնօրենի եւ զինղեկի հետ :

2 Մեր ունեցած տեղեկություններով եւ սոցիալական հարթակներում տեղ գտած գրառումների համաձայն՝ գործող տնօրեն Թ. Թադևոսյանի պարտականությունները իր վրա է վերցրել ռազմագիտության ուսուցիչ Գ. Կոստանյանը ,որը ցուցաբերում է զինվորականին ոչ հարիր վարք դպրոցում : Ի՞նչ գործառույթներ ունի ռազմագիտության ուսուցիչը դպրոցում,ով ըստ տեղեկությունների՝ բղավել ու անպատիվ խոսքերով վիրավորել է ուսուցիչներին,ձեռքերով հարվածել պատերին :

3 . ԼՄ –ը ունի՞ վերահսկողություն այս դպրոցի նկատմամբ եւ նման իրավիճակներում նկատողություններ եւ զգուշացումներ տալու իրավունք ,եւ եթե այո՝արդյո՞ք տրվել է:

3 Ի՞նչ քայլեր է ձեռնարկել Լոռու մարզպետարանի կրթության ,մշակույթի եւ սպորտի վարչությունը՝ ստեղծված իրավիճակը հարթելու եւ նմանատիպ միջադեպերը չկրկնվելու համար :

4.Աշխատակիցներից մեկի խոսքով՝խնդրին ծանոթ են նաեւ ԿԳՄՍ նախարարությունում ,ինչ հանձնարարականներ է ստացել ԼՄ կրթության. մշակույթի եւ սպորտի վարչությունը :

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:
Խնդրում եմ պատասխանը տրամադրել էլ. փոստով՝
Կանխավ շնորհակալ եմ՝

Անահիտ Կարապետյան

18.01.2023